Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական



Փնտրելով բարին

Վերջին Օրերի Սրբերի մի երիտասարդ զույգ, նոր տուն փնտրելիս, խոսեց ապագա հարևանների հետ հարևանության և տարածքում դպրոցների մասին:

Կանանցից մեկը, ում հետ նրանք խոսեցին, ասաց այն դպրոցի մասին, ուր հաճախում էին իր երեխաները. «Սա լավագույն դպրոցն է: Տնօրենը հրաշալի մարդ է, ուսուցիչները փորձառու, բարի ու սիրալիր են: Ես շատ գոհ եմ, որ մեր երեխաները կարող են այցելել այս հրաշալի դպրոցը: Ձեզ այս տեղը շատ դուր կգա»:

Մեկ այլ կին իր երեխաների դպրոցի մասին ասաց. «Սա սարսափելի տեղ է: Տնօրենը ինքնահավան է, ուսուցիչները անփորձ, անկիրթ ու կոպիտ: Եթե ես հնարավորություն ունենայի տեղափոխվելու այս տարածքից, ես անհապաղ կանեի դա»:

Հետաքրքրականն այն էր, որ երկու կանայք էլ խոսում էին նույն տնօրենի, նույն ուսուցիչների և նույն դպրոցի մասին:

Դուք երբևէ նկատել եք, որ մարդիկ հաճախ կարող են գտնել այն, ինչ իրենք փնտրում են: Բավականաչափ ուշադիր նայեք և դուք կարող եք գտնել և լավը, և վատը գրեթե ցանկացած մարդու և ցանկացած բանի մեջ: Մարդիկ ամենասկզբից նույնպես վերաբերվել են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն: Նրանք, ովքեր փնտրում են բարին, կգտնեն բարի ու կարեկցող մարդկանց, որոնք սիրում են Տիրոջը և ցանկանում են ծառայել Նրան և օրհնել իրենց մերձավորների կյանքը: Բայց նաև ճշմարիտ է, որ նրանք, ովքեր վատն են փնտրում, անշուշտ կգտնեն բաներ, որոնք այնքան էլ կատարյալ չեն:

Ցավոք, երբեմն սա պատահում է նաև Եկեղեցու ներսում: Վերջ չկա ստեղծարար մտքին, հնարագիտությանը և համառությանը նրանց, ովքեր քննադատելու պատճառներ են փնտրում: Նրանք կարծես չեն կարողանում ազատվել իրենց չարության ներգործությունից: Նրանք բամբասում են և սխալներ են գտնում ուրիշների մեջ: Նրանք տասնամյակներ շարունակ վիրավորանքներ են պատրաստում՝ ոչ մի առիթ բաց չթողնելով ուրիշներին տապալելու ու նվաստացնելու համար: Սա հաճելի չէ Տիրոջը, «որովհետեւ ուր որ նախանձ եւ կռիւ կայ, այնտեղ անկարգութիւն եւ ամեն չար բաներ կան» (Հակոբոս Գ.16):

Երկար տարիներ սերտորեն աշխատելով Նախագահ Բրիգամ Յանգի (180–77) հետ, Նախագահ Ջորջ Ք. Քեննոնը (1827–1901) լավ էր ճանաչում նրան՝ և որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, և որպես նրա խորհրդական Առաջին Նախագահությունում: Նախագահ Յանգի մահից հետո Նախագահ Քեննոնը գրել է իր օրագրում. «Ես երբեք իմ սրտում, առավել ևս իմ խոսքերում կամ գործողություններում, չեմ քննադատել կամ սխալներ գտել [Բրիգամ Յանգի] ղեկավարման, նրա խորհուրդների կամ ուսմունքների մեջ: Սա այժմ զոհացնում է ինձ: Միտքը, որ ես միշտ ունեցել եմ, հետևյալն էր. եթե ես քննադատեմ, սխալներ գտնեմ կամ պախարակեմ Եղբայր Բրիգամին, ինչքան հեռու ես կգնամ: Երբ սկսեմ, որտե՞ղ ես պետք է կանգ առնեմ: Ես չհամարձակվեցի դա անել: Ես գիտեի, որ ուխտադրժությունը հաճախ քննադատության և սխալներ գտնելու

ոգուն անձնատուր լինելու հետևանք էր: Ուրիշները, ովքեր ավելի ուժեղ, իմաստուն ու փորձառու էին, քան ես, կարող էին շատ բաներ անել ու խուսափել տհաճ հետևանքներից, որը ես չէի կարող անել»:[1]

Նախագահ Քեննոնի զորեղ խորհուրդը մի բան է, ինչի մասին մենք՝ Եկեղեցու անդամներս, պետք է խորհենք մեծ ուշադրությամբ: Աստծո խոսքը խրատում է Քրիստոսի հետևորդներին լինել «սուրբ . . . խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով եւ բարի պտուղներով լիքը, անկողմնասէր, անկեղծ»: Քանզի խաղաղություն անողներին, «արդարութեան պտուղը խաղաղութիւնով է սերմվում» (Հակոբոս Գ.17,18):

Մենք ունենք ընտրություն: Մենք ուրիշների մեջ կարող ենք փնտրել վատը: Կամ մենք կարող ենք խաղաղություն բերել և աշխատել ուրիշներին մոտենալ կարեկցանքով, արդարությամբ և ներողամտությամբ, ինչը մենք անչափ ցանկանում ենք մեզ համար: Դա մեր ընտրությունն է. որովհետև այն, ինչ մենք փնտրում ենք, մենք անշուշտ կգտնենք:

Հղումներ

1. George Q. Cannon, Journal, Jan. 17, 1878; spelling modernized.

Ուսուցանում այս ուղերձից

«Ձեզ կարող է թվալ, թե հասկացողության պակաս ունեք այն սկզբունքի հետ կապված, որը պատրաստվում եք ուսուցանել», հղումներ *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* ([1999], 19): «Սակայն, մինչ դուք աղոթքով ուսումնասիրում եք այն, ձգտում եք ապրել դրանով, պատրաստվում եք սովորեցնել այն, և այնուհետև կիսվում եք դրանով ուրիշների հետ, ձեր անձնական վկայությունը ամրանում և խորանում է»:

Եթե դուք այս ամիս կյանքում և ուրիշների մեջ բարին փնտրեք, դուք ավելի պատրաստված կլինեք ուսուցանելու այս ուղերձը և վկայելու դրա ճշմարտության մասին:

Երիտասարդներ

Շան կծածի լավ կողմը

Թարա Սթրինգհեմ

2009թ. ամռանը իմ ընկերոջ շունը կծել էր իմ երեսը: Դժախտաբար, իմ շրթունքը վնասվել էր, և ես կարեր դնելու կարիք ունեցա:

Վնասվածքի պատճառով ես շատ էի վհատվել: Ես թույլ տվեցի ձախորդությանը կլանել իմ միտքը, և ինձ թվում էր, կարծես իմ ամբողջ կյանքը խորտակված էր: Ես շատ էի սրտնեղում իմ շրթունքի պատճառով և ընդհանրապես չէի ուզում դուրս գալ հասարակության մեջ: Իմ մտքում դաշնամուրի, վոլեյբոլի, եկեղեցու, լողի և դպրոցի իմ ծրագրերը խափանվել էին վնասվածքիս պատճառով:

Բայց երբ ես աղոթում էի, ստանում քահանայության օրհնություն, խոսում իմ ծնողների հետ կամ երբ ինձ այցելում էին ընտանիքիս անդամներն ու ընկերներս, իմ տրամադրությունը բարձրանում էր և ես ուրախության զգացում էի ունենում վհատության այդ պահին:

Այս փորձառությունն օգնեց ինձ վճռականություն ձեռք բերել և ես սովորեցի ուշադրություն չդարձնել այն բանի վրա, թե ինչ էին ուրիշները մտածում իմ մասին: Ես նաև օրհնված էի, որովհետև իմ վնասվածքն օգնեց ինձ գիտակցել, որ ես պիտի ավելի քիչ մտածեի իմ մասին և սկսեի ավելի շատ հոգալ ուրիշների համար: Իմ հոգին մեծապես ամրացավ այս ժամանակահատվածում:

Ես սովորեցի, որ ձախորդությունը մեզ համար Երկնային Հոր ծրագրի մի մասն է: Եթե մենք բարին ենք փնտրում և ոչ թե չարը, մենք կարող ենք հաղթահարել ձախորդությունը, ավելի լավ մարդ դառնալ և թույլ տալ, որ փորձառությունը ամրացնի մեր վկայությունը:

Երեխաներ

Փնտրեք լավը ձեր շուրջը

Դուք կարող եք տեսնել բարին ձեր շուրջբոլորը, եթե սովորեք փնտրել այն: Օրհնությունները գնահատել սովորելու ճանապարհներից մեկը ամեն գիշեր տվյալ օրը ձեր տեսած լավ բաները հաշվելը սովորություն դարձնելն է:

Երեկոյան ժամանակ տրամադրեք և ընտանիքի անդամներից մեկին պատմեք այն լավ բաները, որ այսօր տեսել եք ձեր կյանքուն:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, March 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09763 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Քահանայության ներքո և Քահանայության օրինակով

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Ի՞մ սիրելի քույրեր, որքան օրհնված ենք մենք: Մենք ոչ միայն Եկեղեցու անդամներ ենք, այլ նաև Սփոփող Միության՝ «Տիրոջ կազմակերպության կանանց համար»[1] անդամներ: Սփոփող Միությունը Իր դուստրերի հանդեպ Աստծո սիրո ապացույցն է:

Ձեր սիրտը չի՞ հրճվում, երբ դուք հիշում եք այս միության ոգևորիչ սկզբնավորումը: 1842թ. մարտի 17-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմավորեց քույրերին «քահանայության ներքո՝ քահանայության օրինակով»:[2]

«Քահանայության ներքո» կազմավորվելը քույրերին տվեց իշխանություն և նպատակաուղղվածություն: Էլիզա Ռ. Մնոուն՝ Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահը, սովորեցրել է, որ Սփոփող Միությունը «չի կարող գոյատևել առանց Քահանայության, ելնելով այն փաստից, որ այն ստանում է իր ողջ իշխանությունն ու ազդեցությունը այդ աղբյուրից»:[3] Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը բացատրել է. «Սփոփող Միության պաշտոնյաների և ուսուցիչների կողմից գործադրված իշխանությունն . . . այն իշխանությունն էր, որը նրանք պետք է ստանային Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հետ նրանց կազմակերպչական կապերի և քահանայության ղեկավարների կողմից նրանց անհատական ձեռնադրման միջոցով, ում կողմից և նրանք կանչվել էին»:[4]

«Քահանայության օրինակով» կազմավորվելը քույրերին տվեց սրբազան պարտավորություններ: Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, բացատրել է. «Մենք աշխատում ենք քահանայության ձևով, ինչը նշանակում է, որ մենք փնտրում և ստանում ենք հայտնություն և գործում ենք ըստ դրա, որոշումներ ենք կայացնում խորհուրդներում և հոգ ենք տանում անձանց համար մեկ առ մեկ: Մերն է քահանայության նպատակը՝ պատրաստվել հավերժական կյանքի օրհնություններին, կապելով և պահելով ուխտերը: Հետևաբար, քահանայություն կրող մեր եղբայրների նման, մենք կատարում ենք փրկության, ծառայության և սուրբ մարդ դառնալու աշխատանքը»:[5]

Բարբարա Թոմփսոն, Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական:

Սուրբ գրություններից

Կորնթացիս ԺԱ.11, Վարդապետություն և Ուխտեր 25.3, 121.36–46

Մեր պատմությունից

Նավուի Տաճարի կառուցման ընթացքում մի խումբ քույրեր ցանկացան միավորվել և օգնել շինարարական աշխատանքներին: Էլիզա Ռ. Մնոուն ուրվագծեց այս նոր խմբի կանոնադրությունը: Երբ նա ցույց տվեց դա Մարգարե Ջոզեֆին, նա պատասխանեց. «Ասեք քույրերին՝ նրանց զոհաբերությունն ընդունվում է Տիրոջ կողմից, և նա ավելի լավ բան ունի նրանց համար: . . . Ես կկազմակերպեմ կանանց քահանայության ներքո՝ քահանայության օրինակով»:[6] Կարճ ժամանակ անց Մարգարեն ասաց նոր կազմակերպված Սփոփող Միությանը. «Այժմ ես պտտում եմ բանալին ձեզ համար Աստծո անունով, և այս Միությունը պիտի ցնծա, և գիտելիքն ու խելամտությունը պիտի վար հոսի այս ժամանակից ի վեր»:[7] Այս քույրերից ակնկալվում էր սրբության նոր աստիճանի բարձրանալ և պատրաստվել քահանայության ծեսերին, որոնք շուտով պիտի կատարվեին տաճարում:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Spencer W. Kimball, “Relief Society—Its Promise and Potential,” *Ensign,* Mar. 1976, 4.
2. Joseph Smith, quoted in Sarah Granger Kimball, “Auto-biography,” *Woman’s Exponent,* Sept. 1, 1883, 51.
3. Eliza R. Snow, “Female Relief Society,” *Deseret News,* Apr. 22, 1868, 81.
4. Dallin H. Oaks, “The Relief Society and the Church,” *Ensign,* May 1992, 36.
5. Ջուլի Բ. Բեք, «Սփոփող Միություն. Սուրբ Աշխատանք», *Լիահոնա,* Նոյեմբեր 2009, 110:
6. Joseph Smith, quoted in Kimball, “Auto-biography,” 51.
7. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 451:

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել քույրերին, որոնց ես այցելում եմ, վայելել Սփոփող Միության սուրբ աշխատանքի օրհնությունները:

2. Ի՞նչ կանեմ ես այս ամիս անձնական վկայություն ստանալու իմ ունակությունը մեծացնելու համար:

Լրացուցիչ տեղեկության համար այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message, March 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09763 201